ՀՀ-ՈՒՄ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԿԱՑՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿ ՁԵՌՔ ԲԵՐԵԼԸ

5 հարցերի կարճ պատասխաններ

1 Որո՞նք են ՀՀ-ում ժամանակավոր կացության կարգավիճակ ստանալու հիմքերը:

ա) Ազգությամբ **հայ** լինելը,
բ) ՀՀ-ում **ուսանող** լինելը,
գ) ՀՀ-ում **ձեռնարկատիրական գործունեություն** իրականացնելը,
դ) **Աշխատանքի թույլտվություն ունենալը** (կամ օրենքով սահմանված կատեգորիայի օտարերկրացիների համար՝ աշխատանքի թույլտվություն ստանալու բացառությունների ցանկին համապատասխանելու վերաբերյալ եզրակացություն ունենալը)
ե) ՀՀ քաղաքացու կամ ՀՀ-ում մշտական կամ հատուկ կացության կարգավիճակ ունեցող **օտարերկրացու ամուսին կամ մերձավոր ազգական** (ծնող, զավակ, եղբայր, քույր, տատ, պապ, թոռ) լինելը,
զ) ՀՀ-ում ժամանակավոր կացության կարգավիճակ ունեցող **օտարերկրացու ամուսին, ծնող կամ զավակ լինելը:**

2 Ի՞նչ ժամկետով է տրվում ժամանակավոր կացության կարգավիճակը:

Ժամանակավոր կացության կարգավիճակը տրվում է մինչև **1 տարի ժամկետով՝** յուրաքանչյուր անգամ **1 տարով երկարաձգելու հնարավորությամբ:** Ժամանակավոր կացության կարգավիճակը երկարաձգելու դիմումը պետք է ներկայացվի կարգավիճակի ժամկետը լրանալուց **առնվազն 30 օր առաջ:**

3 Ո՞վ է տրամադրում ժամանակավոր կացության կարգավիճակը:

ՀՀ ՆԳՆ միգրացիայի և քաղաքացիության ծառայությունը:

Հասցե՝ **ՀՀ, Երևան, 0054, Դավթաշեն, 4-րդ թաղամաս, 17/10 շենք**



4 Որքա՞ն է ժամանակավոր կացության կարգավիճակ ստանալու համար պետական տուրքը:

105,000 ՀՀ դրամ:

5 Ի՞նչ փաստաթղթեր/տեղեկություն է անհրաժեշտ ներկայացնել:

Ժամանակավոր կացության կարգավիճակ ստանալու համար ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը՝

ա) դիմում,
բ) դիմում-հարցաթերթիկ,
գ) 3.5 x 4.5 մմ չափսի երեք գունավոր լուսանկար,
դ) անձնագիրը, անձնագրի պատճենը և անձնագրի նոտարական կարգով վավերացված **հայերեն թարգմանությունը**,
ե) առողջական վիճակի մասին տեղեկանք,
զ) Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսանալու հանգամանքը պարզելու համար ներկայացվում են նաև դիմումատուի ծննդյան վկայականի, ծնողների անձնագրերի և ծնողների ամուսնության վկայականի պատճենները,
է) ՀՀ-ում օրինական հիմքով բնակվելը հավաստող փաստաթուղթ՝ ՀՀ մուտքի վիզա, կացության քարտ, ՀՀ հատուկ անձնագիր, սահմանային վերահսկողություն իրականացնող մարմնի կողմից անձի փաստաթղթում ՀՀ մուտք գործելու մասին կատարված նշումը,
ը) պետական տուրքի վճարման անդորրագիրը (մինչև 18 տարեկան անձանց դեպքում պետական տուրք չի գանձվում);

Հայաստանի Հանրապետությունում կացության կարգավիճակ ստանալու (կացության կարգավիճակը երկարաձգելու) **հանգամանքը հիմնավորող փաստաթղթեր՝**

ա) ազգությամբ հայի դեպքում՝ ազգությամբ հայ լինելը հավաստող փաստաթղթերից որևէ մեկը,
բ) ձեռնարկատիրական գործունեության դեպքում՝ ձեռնարկատիրական գործունեությունը հավաստող փաստաթղթեր,
գ) ՀՀ քաղաքացու կամ ՀՀ-ում հատուկ, մշտական կամ ժամանակավոր կարգավիճակ ունեցող օտարերկրացու մերձավոր ազգականի դեպքում՝ ազգակցական կապը հավաստող փաստաթուղթը, ՀՀ քաղաքացու անձնագիրը, հատուկ անձնագիրը, մշտական կացության քարտը, ժամանակավոր կացության քարտը,
դ) ուսման դեպքում՝ ուսման հանգամանքը հիմնավորող փաստաթուղթը:

Բոլոր **օտարալեզու փաստաթղթերը** պետք է լինեն օրենքով սահմանված կարգով հաստատված և նոտարական վավերացմամբ **հայերեն թարգմանությամբ:**